ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Զինիշյան» հիշատակի հիմնադրամը (ԶՀՀ), ելնելով Վարդենիսի տարածաշրջանի համայնքների զարգացմանն ուղղված իր ռազմավարական նպատակներից, հայտարարում է «Դրամաշնորհային ծրագրերի մրցույթ» Վարդենիսի՝ Նորակերտ, Տորֆավան, Վաննաև, Խաչաղբյուր, Գեղաքար, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, **Շողակաթ միավորված համայնք՝** Դրախտիկ, Աղբերք, Շարժա, Արտանիշ, Ձիլ, Ծափաթաղ գյուղական համայնքների համար:

Սույն մրցույթին, ի նպաստ իրենց համայնքների և/կամ դպրոցի շահերի, մասնակցելու են հրավիրվում նաև Արեգունի, Արփունք, Խաչաղբյուր, Կախակն, Լճավան, Մաքենիս, Վաննաև և Փոքր Մասրիկ գյուղերի միջնակարգ դպրոցները:

Դրամաշնորհային ծրագրերի նպատակը

Ծրագրի նպատակն է հնարավորություն տալ Վարդենիսի տարածաշրջանի համայնքներին գտնելու կայուն և կենսունակ լուծումներ ներհամայնքային սոցիալ-տնտեսական խնդիրներին՝ համախմբելով առկա արտաքին և ներքին մարդկային և ֆինանսական ռեսուրսները:

Այդ լուծումներին հասնելու համար Ծրագիրը ենթադրում է.

- խթանել փոխվստահության մթնոլորտը համայնքներում, մոբիլիզացնել համայնքների ներքին և արտաքին ռեսուրսները և ուղղել դրանք համայնքային կոնկրետ խնդիրների լուծմանը,
- օժանդակել տարածաշրջանի զարգացմամբ հետաքրքրված պետական և ոչ պետական հաստատությունների և անհատների ներուժի միավորմանը՝ ուղղելով այն դեպի համայնքային խնդիրների կոնկրետ լուծումներին կամ այդ խնդիրների լուծմանը ուղղված արդյունավետ մեխանիզմների ներդրմանը:

Դրամաշնորհ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ է հետևյալ ուղղվածության ծրագրերին

- մշակութային և հոգևոր զարգացում,
- համայնքային առաջնային կարևորության հիմնախնդիրների լուծում,
- կանանց, երիտասարդների և բնակչության խոցելի խմբերի զարգացում,
- ենթակառուցվածքների բարեկարգում, համայնքային ծառայությունների որակի բարելավում՝ նորարարական մոտեցումների և լուծումների միջոցով,
- համայնքի սոցիալական որևէ շերտի/ շերտերի շահերի պաշտպանություն,
- բնապահպանական խնդիրներին ուղղված ծրագրեր,
- այլընտրանքային էներգակիրների կիրառման ծրագրեր:

<u>Սույն մրցույթի շրջանակներում.</u>

հիմնական/միջնակարգ կրթության պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերը չեն համարվում առաջնահերթային, սակայն, դրանց ֆինանսավորումը նույնպես չի բացառվում:

Դրամաշնորհի ՉԻ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ հետևյալ ուղղվածության ծրագրերին.

- մարդասիրական անմիջական օգնություններ,
- պարտադիր պետական կրթական (հանրակրթական և բարձրագույն) ծրագրերի/դասընթացների իրականացում,
- բժշկական զննումներ, անհատական բուժումներ և հիմնական հետազոտական աշխատանքներ,
- կրթաթոշակներ և անհատական ուսման վարձեր,
- առևտրային կազմակերպությունների ընթացիկ գործունեության (կամ գործունեությանը ուղղված) աջակցում, ինչպես նաև այդ գործունեություններին նպաստող սարքավորումների ձեռքբերում,
- գիտական/հետազոտական աշխատանքներ,
- արտասահմանյան գործուղումների, Հայաստանից դուրս կազմակերպվող զարգացման միջոցառումների, փորձի փոխանակումների մասնակցելու ծախսեր:

Դրամաշնորհի չափը

Յուրաքանչյուր համայնքի/դպրոցի համար նախատեսված դրամաշնորհի առավելագույն չափը 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամ է:

Կտրամադրվի 5-ից 7 դրամաշնորհ:

Համայնքային զարգացման «Նախագիծ առաջարկ»՝ (Ծրագիր) կարող են ներկայացնել

Վերը հիշատակված համայնքների Համայնքային ՏԻՄ-երը, Համայնքային Ակտիվ Խմբերը (ՀԱԽ), կամ Վարդենիսի տարածաշրջանում գործող և գյուղական համայնքների զարգացմամբ հետաքրքրված հասարակական կազմակերպությանները և/կամ հիմնադրամները:

Ներկայացնող Նախագիծ առաջարկը (Ծրագիրը) պետք է բավարարին հետևյալ պայմաններին.

- Համայնքային Ակտիվ Խումբը (ՀԱԽ) պետք է ակտիվ համագործակցի համայնքի Տեղական Ինքնակառավարման Մարմինների (համայնքապետարան և ավագանիներ, այսուհետև՝ ՏԻՄ) հետ հայեցակարգերի մշակման բոլոր փուլերի ընթացքում, ընդհուպ մինչև ամբողջական ծրագրի ներկայացման և իրականացման շրջաններում:

Դպրոցների, կամ այլ համայնքային կառույցների կողմից ներկայացված ծրագրերում նույնպես պետք է արտահայտվի համագործակցությունը ներհամայնքային կառույցների միջև և գյուղի բնակիչների լայն ներգրավումը հայեցակարգերի, ապա նաև ծրագրերի մշակման բոլոր փուլերի ընթացքում:

- Համայնքը պետք է ունենա իր նախագիծ առաջարկով՝ Ծրագրով ստեղծվելիք արժեքների պահպանման պլան,
- Նախագիծ առաջարկը պետք է ներկայացվի համայնքի ընդհանուր ժողովին և հաստատում ստանա համայնքից և ՏԻՄ-ից, որտեղ և կհաստատվի Ծրագրի ղեկավարի անձը, կամ
- եթե Նախագիծ առաջարկը դպրոցի նախաձեռնությունն է, ապա այն պետք է նախապես ներկայացված և հաստատված լինի դպրոցի տնօրինության և

ուսուցչական խորհրդի ընդհանուր որոշմամբ: Այդ նույն որոշմամբ պետք է հաստատվի նաև Ծրագրի ղեկավարի անձը,

- Նախագիծ առաջարկը, որը հետագայում կվերածվի Ծրագրի, պետք է ընտրված լինի համայնքային մասնակցությամբ և ապահովի ամբողջ համայնքի, կամ նրա մեծամասնության ներդրումները,
- Նախագիծ առաջարկի՝ Ծրագրի շուրջ կատարվող գործընթացները պետք է թափանցիկ և հասանելի լինեն համայնքի բնակչության համար,
- Ներկայացված «Նախագիծ Առաջարկը» պետք է ենթադրի նաև համայնքի կողմից համաներդրման/համաֆինանսավորման բաղադրիչ,
- Շահառու համայնքը ծրագրի իրականացման համար պետք է ներդրում կատարի (ՏԻՄ հաստատումով) ոչ պակաս, քան ակնկալվող Դրամաշնորհի գումարի 30%-ի չափով, որի ոչ պակաս քան.

- *10%-ը պետք է լինի ֆինանսական ներդրում, իսկ մնացած*
- *20 %-ը կարող է լինել բնաիրային և/կամ աշխատուժով:*

Ներկայացված «Նախագիծ առաջարկի» ՝ ծրագրի իրականացման վերջնաժամկետ է սահմանվում 2021թ. մայիսի 30-ը :

Նախագիծ-առաջարկների ներկայացման կարգը և հաստատումը

Նախագիծ-առաջարկությունների փաթեթները կընդունվեն են մինչև **2020թ. սեպտեմբերի 20-ը:**

Նախագիծ-առաջարկության պետք է ներկայացվի Ձինիշյան հիշատակի հիմնադրամի գրասենյակ՝ ստորագրված և կնքված կազմակերպության իրավասու ներկայացուցչի կողմից, կամ ուղարկվի gevorga@jinishian.am էլեկտրոնային փոստին: Նախագիծ-առաջարկության էլեկտրոնային տարբերակը կարող է ներկայացվել նաև որևէ էլեկտրոնային կրիչով՝ խտասկավառակ, կամ ֆլեշ քարտ:

Այս մրցույթի ընթացքում ստացված բոլոր նախագիծ առաջարկները կքննարկվեն և կհաստատվեն ՁՀՀ-ի տարածաշրջանի զարգացմամբ հետաքրքրված այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից ստեղծված հանձնախմբի կողմից:

- Դրամաշնորհի մրցույթին մասնակցելու փաթեթ (հայտարարություն և ուղեցույց) ստանալու համար դիմել «Ձինիշյան» հիշատակի հիմնադրամի գրասենյակ յուրաքանչյուր աշխատանքային օր (երկուշաբթի-ուրբաթ), ժամը 10.00-ից - 17.00-ը, կամ ներբեռնել https://www.jinishian.org/vdi-2020-2021-grant-competition-announcement-eng կայք էջից: Խորհրդատվություն կարելի է ստանալ ցանկացած աշխատանքային օր՝ ըստ նախապես ձեռք բերված պայմանավորվածության, կամ հեռախոսի միջոցով: Խորհրդատվության համար դիմել «Ձինիշյան» հիշատակի հիմնադրամի համայնքային զարգացման ծրագրի համակարգող Գևորգ Աբոյանին՝ հետևյալ հասցեով.

Ք. Երևան 0009, Աբովյան 34, բն 5

Հեռ. (010) 54 44 17, 54 44 18; 54 28 52;
Բջջ. (077) 54 44 18; 099 54 47 18
էլ-փոստ՝ gevorga@jinishian.am